

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅՈՒՄ ԵՎ ՔԻՇՆԵՎՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐՋ ԿԳՆԻ ԲԵՎԵՌԱՅՄԱՆԸ»

Մայիսի 29-31-ը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում մասնակցեց Գլոբալ անվտանգության համաժողովին (GLOBSEC): Համաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետը թեմատիկ քննարկումներից մեկի ժամանակ պատասխանեց լրագրողներին հետաքրքրող հարցերին:



Անդրադառնալով ռուսական պատերազմին, Ռուսաստանի դեմ Արևմուտքի կողմից սահմանված պատժամիջոցների, ինչպես նաև Վրաստանի քաղաքացիների համար այցեգրային պայմանագրի վերացման ու

անմիջական օդային հաղորդակցության վերականգնման մասին Ռուսաստանի կողմից ընդունած միա՝ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆԱՉԱՌ, ԶԵՉՈՔ ԴԵՐ Է ԽԱՂՈՒՄ ՄԵՐ ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԴԵՂՄԱՆ ՀԱՄԱՐ»

Հունիսի 1-2-ը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում մասնակցեց Եվրոպական քաղաքական միության երկրորդ գագաթաժողովին: Մասնակցում էին եվրոպական երկրների 47 եւ Եվրամիության տարբեր կառույցների ղեկավարներ:



հաստանի վարչապետերի համա՝ «Անվտանգություն» կոչվող թե՝ մախագահությամբ անցկացված (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Միջոցառման շրջանակներում, Իրակլի Դարիբաշվիլին մասնակցեց լիազուստր նիստի բացմանը եւ կլոր սեղանի ձեւաչափով, Միացյալ Թագավորության եւ Լե՝

ԵՆԹԱԿՆՈՒՄՅՑ

ԹԵԱ ԱԽՎԵԴԻԱՆԻ. «ԱՉՎԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԼԵՉՎԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆՆ Է»

Հունիսի 1-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեդիանին Ախալքալաքի մունիցիպալիտետի Կումբուրդո գյուղում մասնակցեց նորակառույց մանկապարտեզի բացման արարողությանը եւ վավերացրեց Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում լայնածավալ տեղեկատվական քարոզարշավի մեկնարկը:



Թեա Ախվեդիանին Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում ծրագրված լայնածավալ տեղեկատվական քարոզարշավը սկսեց տեղի բնակչության հետ հանդիպումներով եւ Ախալքալաքիում բնակչությանը ներկայացրեց եռաբաթյա տեղադրությամբ քարոզարշավի ծրագրերը, որոնք հետապնդում են տարբեր հրատապ հարցերի վերաբերյալ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին տեղեկատվության եւ պետական ծրագրերին նրանց մասնակցության մատչելիության մեծացման նպատակ:

րամասնություններով բնակեցված մունիցիպալիտետներում՝ Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցխեում եւ Ասպինձայում անցկացվելիք քարոզարշավի շրջանակներում, բնակչությանը կընծեռվի հնարավորություն մանրամասն տեղեկատվություն ստանալ կրթության, պետական լեզվի ուսուցման, առողջապահության, գյուղատնտեսության, սոցիալական եւ տնտեսական ուղղություն՝ (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ինչպես նշեց պետնախարարը, ազգային փոք՝

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՇՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 105-ԱՄՅԱԿԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Մայիսի 28-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երկրի նախագահ Վահագն Խաչատրյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի, Հայաստանի բարձրագույն ղեկավարության եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ, Հանրապետության տոնի առիթով այցելեց Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր:

Նիկոլ Փաշինյանը հուշահամալիրից շնորհավորական ուղերձ հղեց, ապա հնչեց Հայաստանի պետական օրհներգը, եւ տեղի ունեցավ տոնական քայլեր:



Նիկոլ Փաշինյանը, Վահագն Խաչատրյանը, Ալեն Սիմոնյանը, Հայաստանի բարձրագույն ղեկավարության մյուս ներկայացուցիչները ծաղկեպսակ դրեցին Սար՝

դարապատի ճակատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեցին նրանց հիշատակին:

ԲՐՅՈՒՄԵԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԸ ԵԼՈՒՅՐ ՈՒՆԵՅՆԱԿ ԵՎՐԱՄԻՈՐՀՐԳԱՐԱՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Բրյուսելում: 13 ամյա ընդմիջումից հետո, նա կրկին ելույթ ունեցավ Եվրախորհրդարանում:



Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Եվրամիության ներկայացուցիչ բարձրագույն պաշտոնյաների՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լեյենի եւ Եվրախորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլայի հետ: Եվրամիության կենտրոնական գրասենյակում կայացած

հանդիպումներում Սալոմե Ջուրաբիշվիլին եւս մեկ անգամ նշեց վրաց ժողովրդի կամքը՝ միանալու Եվրոպական մեծ ընտանիքին, եւ ընդգծեց վրաց հասարակության համար ԵՄ թեկնածուի կարգավիճակ շնորհելու կարեւորությունը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐՉԱՊԵՏՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՅԵՑՎԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 105-ԱՄՅԱԿԻ ՀՈՒՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Մայիսի 30-ին, Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի հրավերով, Հայաստանի գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը մասնակցեց Բաթումիում կայացած Վրաստանի դատախազության 105-ամյակի հոբելյանական միջոցառումներին:



Շնորհավորական իր խոսքում Հայաստանի գլխավոր դատախազը նշեց, որ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

